ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19.03.2019թ.
ժամը 11[15]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա.Սահակյան)

1.1 Հաշվի առնելով **Eauction** համակարգում ի հայտ եկած խնդիրները և դրանց վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 22.02.2019թ. 01.1/26-12727-19 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց որակավորման կամ որակավորման շտկման փաստաթղթերը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել հանձնաժողովի քարտուղարի՝ **a.sahakyan@mil.am** էլեկտրոնային փոստի միջոցով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործնթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ և 47-րդ կետերի պահանջներին համապատասխան:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին տեղեկատվության համաձայն՝ **«Խաչպար» և «Մեդիտեք» ՍՊԸ-ները** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել: *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի քննարկվել (գնահատվել):*

1.3 Սույն ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից **էլեկտրոնային փոստի** միջոցով ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի՝

«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէր նկարագրված՝ անհրաժեշտ էր հստակեցնել այն՝ բացառելով «կամ» արտահայտությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքին հղում կատարելը, ինչպես նաև կրկնվող բովանդակությունը (տեղեկատվությունը):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 15.03.2019թ.-ին որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով վերոնշյալ մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

«Մեդիտեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, և 19.03.2019թ. հանձնաժողովը շարունակեց նիստը:

1.4 Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, **«Խաչպար» և «Մեդիտեք» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Հանձնաժողովը որոշեց **«Խաչպար» և «Մեդիտեք» ՍՊԸ-ներին**, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժինների մասով, որոնցով նրանք ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ և վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.6 Հանձնաժողովը որոշեց 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին (հայտերը Eauction համակարգի կողմից մերժվել են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցելու հիմքով)):

1.7 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի առ 01.02.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/01 որոշումը (հրապարակվել է 05.02.2019թ.)՝ հանձնաժողովը 11.02.2019թ.-ին որոշել էր 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած (Eauction համակարգում սույն ընթացակարգի հրավերի 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը փոփոխելու վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու անհնարինության հիմքով):

1.8 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող	Ա.Սահակյան